

ՄԻ  
ԿՅԱՆՔԻՑ  
ԱՎԵԼԻ

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# ՄԻ ԿՅԱՆՔԻՑ ԱՎԵԼԻ

Արմեն Սարգսյանի կարիերան՝  
պետանվտանգությունից մինչև դիվանագիտություն



ԵՐԵՎԱՆ  
2023

ՀՏԴ 78:35:327  
ԳՄԴ 85.31+66.4  
Ս 259

Սարգսյան Սուրեն  
Ս 259 Մի կյանքից ավելի: Արմեն Սարգսյանի կարիերան՝  
պետանվտանգությունից մինչև դիվանագիտություն / Ս. Սարգսյան.-  
Եր.: Newmag, 2023.- 128 էջ:

Ի՞նչ կապ կարող են ունենալ Մոնթե Մելքոնյանը, հայկական ջութակագործության  
դպրոցի առաջին գործիքը, Աֆղանստանում իրականացված հատուկ օպերացիա-  
ները, Հռոմի Հովհաննես Պողոս Բ պապը և Հայաստանի դեսպանը, որը Կոմիտասի  
ստեղծագործություններն անձամբ էր կատարում՝ նվագախմբի հետ ներկայացնելով  
օտարերկրյա լսարաններին:

Մոնթե Մելքոնյանին Հայաստան տեղափոխելու օպերացիայի հեղինակը, Աֆ-  
ղանստանում հատուկ օպերացիաներ մշակողը, Հռոմի պապի հետ անձնական  
նախաձեռնությամբ հանդիպած պաշտոնյան և պրոֆեսիոնալ ջութակահարը, որը  
Շահեն Երիցյանի առաջին գործիքով Հայաստանը ներկայացնում էր եվրոպական  
լսարաններին, նույն մարդն էր: Այս գիրքը երաժիշտ, հետախույզ, գնդապետ և դես-  
պան Արմեն Սարգսյանի կյանքի և գործունեության մասին է: Այն դրվագների, որոնք  
տարիներ շարունակ անհայտ էին նույնիսկ նրան ճանաչողներին:

ՀՏԴ 78:35:327  
ԳՄԴ 85.31+66.4

ISBN 978-9939-884-85-1

Սուրեն Սարգսյան «Մի կյանքից ավելի» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ

Գրքի հրատարակման բոլոր իրավունքները պատկանում են Newmag ընկերությանը:

## Բովանդակություն

	Նախաբան	7
<b>Գլուխ 1</b>	Ընտանիք, մանկություն, պատանեկություն	9
<b>Գլուխ 2</b>	Պետական անվտանգություն	19
<b>Գլուխ 3</b>	Հետախուզությունից՝ ռազմական դիվանագիտություն	67
<b>Գլուխ 4</b>	Ռազմական դիվանագիտությունից՝ հանրային դիվանագիտություն	103
	Վերջաբան	121
	Ծանոթագրություններ	123

# Նախաբան

Այս գիրքը չափազանց բարդ, ծանր, բայց միաժամանակ հեշտ գրվեց: Ծանր, քանի որ հեղինակի համար դժվար է գրել իր հոր մասին՝ պահպանելով օբյեկտիվությունը, բացառելով զգացմունքայնությունն ու հուզականությունը: Դժվար, քանի որ հորս գործունեության մասին տեղեկություններ հայթայթելը չափազանց դժվար էր՝ հատկապես հաշվի առնելով նրա աշխատանքի բնույթը: Պետք էր հասանելի տեղեկությունների հետ աշխատել այնպես, որ դրանց հրապարակումը չվնասի որոշակի անձանց, նրանց աշխատանքին, չհարվածի պետության շահերին:

Հեշտ էր այն առումով, որ աշխատում էի կյանքիս ամենից կարևոր աշխատության վրա, անում էի սիրով, նվիրումով և մեծ բավականությամբ: Ժամեր և օրեր էի անցկացնում հորս արխիվային փաստաթղթերի առաջ, հին լուսանկարների կապոցներն էի քրքրում, գրուցում էի նրա ընկերների և գործընկերների հետ՝ նրա մասին իմանալով նոր պատմություններ և բացահայտելով նրա գործունեության որոշ դրվագներ: Նորովի էի բացահայտում մարդուն, որի մասին կարծես ամեն ինչ գիտեի, սակայն պարզվեց՝ շատ բան չգիտեի:

Պատահական չէր, որ մահից օրեր առաջ նա ինձ նվիրեց իր համակարգիչը, և այս գրքի վրա հիմնական աշխատանքը կատարեցի հենց այդ համակարգչով: Նա սիրում էր սիմվոլիզմը, հարգում էր ավանդույթները, և այս գիրքն էլ կառուցված է սիմվոլիզմի ու ավանդույթների ոգով:

Շնորհակալ եմ հորեղբորս՝ Տիգրան Սարգսյանին, որն այս կարևոր առաքելությունը վստահեց հենց ինձ. այս գիրքը գրելու գաղափարը նրանն է: Նա ցանկացավ այս հուշագրությունը նվիրել իր եղբոր լուսավոր ու պայծառ հիշատակին:

## Գլուխ 1

# Ընտանիք, մանկություն, պատանեկություն

Երիտասարդ լրագրող, Հայրենական մեծ պատերազմի վետերան Սուրեն Սարգսյանի ընտանիքում 1958 թվականի մարտի 20-ին ծնվեց երկրորդ որդին՝ Արմենը: Առաջնեկը՝ Աշոտը, ծնվել էր 1956-ին: Տոհմի հիմնադիր Սարգիս պապը՝ Սուրենի հայրը, առաջին թոռան ծննդյան օրը Կիրովականում՝ Կալինինի փողոցում, կառուցեց այն տունը, որը հետագայում հայրական ու պապական օջախ էր դառնալու Սարգսյանների մեծ գերդաստանի համար:



*Հայրական տունը Կիրովականում*

Երկհարկանի քարաշեն տունը նախագծված էր այնպես, որ Սարգսի և Փեփրոնեի բոլոր յոթ երեխաները՝ Սուրենը, Լևոնը, Նորիկը, Ռաֆիկը, Էմման, Վլադիմիրը և Ռոզան, իրենց սենյակներն ունենան, ընտանիք կազմեն ու երջանկությունը վայելեն մեկ հարկի տակ:

Սարգիս դային Ցեղասպանությունից փրկվել էր իր քույր-եղբայրների շնորհիվ: Նրանք Էրզրումի Մանց գյուղից Ռուսական կայսրության Արմավիր քաղաք էին հասցրել փոքրիկ Սարգսին: Նա էլ հետագայում իր զավակներին կոչել էր թուրքական յաթաղանին զոհ գնացած իր քույրերի ու եղբայրների անուններով:

Սարգիսը բարձրահասակ, խորաթափանց հայացքով, թիկնեղ տղամարդ էր և Կիրովականում մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում: Կինը՝ Փեփրոնեն, փոքրամարմին կին էր: Արմավիրում 1924-ին ծնվեց նրանց ավագ որդի Սուրենը: Հետագայում ընտանիքը տեղափոխվեց Կիրովական: Երբ պայթեց Մեծ հայրենականը, Սուրենը մեկնեց ճակատ, թեև տասնութը չէր բոլորել: Անցավ ռազմի դաշտի բոլոր արհավիրքների միջով և վերադարձավ 1945-ին՝ բազմաթիվ բեկորների մարմնում, օջախի ծովսը շարունակելու փափագը սրտում:

Սուրենի կինը՝ Աղավնի Սարգսյանը (Աղավնի Իգնատոսյան), ծնվել էր 1927-ի օգոստոսի 29-ին Անդրանիկ և Եղիսաբեթ Իգնատոսյանների ընտանիքում՝ Ռուսաստանի Ստավրոպոլ քաղաքում: Նրանց ընտանիքը նույնպես գաղթել էր Էրզրումից ու մինչև Երևան տեղափոխվելը ժամանակավոր բնակություն էր հաստատել Ռուսաստանում: Մի գեղեցիկ օր Աղավնու հայրը՝ Անդրանիկը, Երևանի շուկայում հանդիպեց իր երկրացի և վաղեմի բարեկամ Սարգիս Սարգսյանին, որին



Էրզրումում վերջին անգամ տեսել էր կոտորածից առաջ: Պատահական հանդիպումը բախտորոշ դարձավ: Գրկախառնվեցին, հուզվեցին, վերհիշեցին, վերապրեցին և այլևս չբաժանվեցին: Նրանց զավակները՝ Սուրենն ու Աղավնին, ամուսնացան, ընտանիք կազմեցին, Սարգիսն ու Անդրանիկն էլ դարձան խնամի-բարեկամներ: Աղավնին տեղափոխվեց Կիրովական՝ ամուսնու մոտ, ու մինչև Երևան տեղափոխվելը երիտասարդ զույգը մի որոշ ժամանակ բնակություն հաստատեց Կիրովականում: Այստեղ էլ ծնվեցին նրանց երեխաները՝ Աշոտը, Արմենն ու Տիգրանը: Սուրենի ընտանիքը Երևան տեղափոխվեց 1961-ին, և նրա բոլոր երեխաները մանկապարտեզ ու դպրոց գնացին Երևանում: Արմենը շնորհալի երեխա էր: Մանկապարտեզում հավաքում էր չափազանց բարդ կոնստրուկտորական խաղալիքները, արագ սովորելու բացառիկ կարողություն էր դրսևորում, ուներ երաժշտության հանդեպ հետաքրքրություն: Երևանում երեխաները Պուշկինի անվան դպրոցում էին սովորում: Սուրենի բնակարանը դպրոցից մի քանի քայլի վրա էր՝ Աբովյան փողոցում:

## **Զուրթակը**

Արմենի կյանքի ամենատարբեր փուլերում բացառիկ նշանակություն ունեցավ ջուրթակը: Բնականաբար, սկզբում միայն զբաղմունք էր: Հետո դարձավ երկրորդ մասնագիտություն: Դիվանագիտական կարիերայի վերջին տարիներին այն ոչ միայն երաժշտական գործիք էր, որը շատ լավ նվագում էր դեսպան Արմեն Սարգսյանը, այլև դիվանագիտական.

Հայաստանի Հանրապետության դեսպանն օտարերկրյա լսարաններին անձամբ էր ներկայացնում հայկական երաժշտությունը:



*Արմենը ջութակ է նվագում: Երևան, 1960-ականներ:*

Ամեն ինչ սկսվեց այնպես, ինչպես հազարավոր խորհրդային երեխաների կյանքում: Սարգսյանների ընտանիքի բոլոր երեխաներին ծնողները 1960-ականներին տարան երաժշտական դպրոց: Աշոտը գնաց դաշնամուրի բաժին, Արմենը՝ ջութակի, Տիգրանը՝ թավջութակի: Սակայն միայն Արմենը որոշեց մինչև վերջ սովորել երաժշտական դպրոցում: Աշոտն ու Տիգրանն այլ հետաքրքրություններ ձեռք բերեցին և չցանկացան շարունակել երաժշտական կրթությունը: Արմենը

սիրեց ջութակն ու երաժշտությունը: Նա կատարելագործում էր իր կատարողական կարողությունները և լուրջ հաջողություններ արձանագրում: Հետևաբար պետք էր որակյալ ջութակ ձեռք բերել տաղանդաշատ երիտասարդի համար, քանի որ երաժշտական լավ գործիքը հաջողության կարևոր նախադրյալ է: Ընտանիքում քննարկման դրվեց այս խնդիրը: Այդ տարիներին Հայաստանում լավագույն ջութակագործը Շահեն Երիցյանն էր: Նա հայրենիք էր տեղափոխվել 1925-ին Հունաստանից: Աթենքում ջութակներ էր պատրաստում և աշակերտել էր հույն լավագույն վարպետներին: Նա Հայաստանում ջութակի առաջին դպրոցը հիմնեց 1925-ին Եղիշե Չարենցի օգնությամբ<sup>1</sup>: Սա առաջին ստուդիան էր Խորհրդային Հայաստանում, որը ստեղծում էր ջութակ, մանդոլին, կիթառ, թավջութակ և երաժշտական այլ գործիքներ: Շահենի արհեստանոցում պատրաստում էին նաև ժողովրդական գործիքներ՝ թառ, քամանչա և բազմաթիվ այլ նվագարաններ, որոնք նպաստեցին հայաստանյան երաժշտական կատարողական արվեստի զարգացմանը<sup>2</sup>:

Սուրենը որոշեց, որ որդին պետք է լավագույն գործիքն ունենա՝ երաժշտական կրթությունը շարունակելու համար: Եվ դիմեց վարպետ Շահենին, որի ցույց տված գործիքների մեջ էր նաև 1927-ին Հայաստանում պատրաստված առաջին և լավագույն ջութակը: Վարպետը չէր ցանկանում բաժանվել դրանից, սակայն տեղի տվեց, երբ Արմենն այդ ջութակով ի ցույց դրեց իր կատարողական ձիրքը: Այդ օրերի համար մեծ գումար վճարեց Սուրենը՝ 600 ռուբլի: Եվ Արմենի ձեռքում հայտնվեց հայկական ջութակագործական դպրոցի հիմնադիր Շահեն Երիցյանի՝ Երևանում ստուդիան հիմնելուց

հետո պատրաստած առաջին ջութակը: Հայկական ջութակագործության առաջին գործիքը:

Վարպետ Շահենի որդին՝ հոր գործը շարունակող, ջութակի վարպետ Մարտին Երիցյանը, 2018-ին, նկարագրելով գործիքը, իր փորձագիտական եզրակացության մեջ գրեց. «Գործիքի կարևորությունն այն է, որ վարպետի լավագույն աշխատանքներից է»: Եվ իրոք, գործիքի տեմբրը բացառիկ էր: Վարպետն այն պատրաստել էր եղևնուց և թխկուց՝ ապահովելով ֆանտաստիկ հնչողություն: Հետագայում, ավարտելով Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոցը, Արմենն ընդունվելու էր Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանի ջութակի բաժին: Սակայն մինչև այդ երկար ճանապարհ պիտի անցներ՝ հիմնական կրթություն ստանար և մասնագիտություն ձեռք բերեր:



*Հայկական ջութակագործական դպրոցի անդրանիկ ջութակը՝ վարպետ Շահեն Երիցյանի սրտեղծած բացառիկ նմուշը, 1927:*

Արմենը 1975-ին ավարտեց դպրոցը և որոշեց ուսումը շարունակել Մոսկվայի պետական համալսարանի՝ Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտում: Արմենը փայլուն առաջադիմությամբ էր ավարտել միջնակարգ դպրոցը: Բազմաթիվ հանրապետական օլիմպիադաների դափնեկիր էր: Հենց այդ ժամանակաշրջանից էլ երազում էր դիվանագետ դառնալ:

Ըստ ընդունված կարգի՝ Հայաստանի կոմերիտմիության կենտրոնական կոմիտեն միջնորդագիրն ուղարկում է Մոսկվայի պետական համալսարան: Ընդհանուր առմամբ, Խորհրդային Հայաստանից ներկայացվում է 5 թեկնածու: Մոսկվա է մեկնում 4 թեկնածու, սակայն Մոսկվայում նրանց թույլ չեն տալիս մասնակցել ընդունելության քննություններին: Գործը հասնում է նրան, որ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդում ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի մշտական ներկայացուցիչը նամակով դիմում է Խորհրդային Միության կրթության փոխնախարար Նիկոլայ Կրասնովին՝ հայտնելով, որ Հայաստանի ներկայացուցիչներին չեն թույլատրել մասնակցել ընդունելության քննություններին: Ինստիտուտի նորանշանակ ռեկտոր Ռոման Ախրամովիչն էլ դա հիմնավորել էր նրանով, որ «դիմորդների ցուցակներում չափից շատ հայեր կան, այդ պատճառով նրանց չեն թույլատրում մասնակցել ընդունելության քննություններին»: Փոխնախարար Նիկոլայ Կրասնովը ռեկտորին գրավոր ցուցում է տալիս՝ ընդամենը երկու ուսանողի թույլ տալ մասնակցել քննություններին: Արմենը փայլուն հանձնում է բոլոր քննությունները, սակայն վերջում նրան անբավարար են նշանակում օտար լեզվից՝ գերմաներենից: Սա, իրոք, զարմանալի էր, քանի որ Արմենը փայլուն գիտեր գերմաներեն, ուներ գերազանց գիտելիքներ, և նույնիսկ ԵՊՀ